Կապադովկիայի մէջ։ Այդտեղ էլ առաջին անգամ գտնուել են Հեթիթերէն բազմաթիւ արձանագրութիւններ։

Ահա այդ հեթիթերէն լեզուն է, որ ենդէն համարում է Հնդեւրոպական, այն եւս՝ հայերէնին չատ մօտ (ենդէն մեր ցեղի Հայ անունն էլ նոյնացնում է Հաթ (Հեթիթ) անուան հետ)։ Կարճ՝ Հեթիթները (կամ հնագոյն Կելիկեցիները) հայերի նախահայրերը եւ կամ մօտ ցեղակիցներն են եղել։

Մարքվարտ ժխտում է այս տեսութիւնը։ Նա այն կարծիքին է, թէ «հեթիթերէնը բնաւ կապ չունի հայերէնի հետ եւ հեթիթերէնը, Հնդեւրոպական լեզու էլ չէ», թէպէտ միեւնոյն ժամանակ խիստ ուշադրաւ է համարում տակաւին 1915 թ. չեխ գիտնական Հրոզնիի այն յայտարարութիւնը թէ՝ իրեն յաջողուել է թարգմանել Բողազ-Քէօյի սեպագրութեանց լեզուի կազմութեան մէջ, եւ թէ, նրա կարծիքով, հեթիթերէնը յիրաւի, Հնդեւրոպական լեզու է, այն եւս՝ եւրոպական ճիւղին պատկանող։ Այդ ապացուցելու պարագային իսկ Մարքվարտ մօտիկ յարակցութիւն չէ գտնում նրա եւ հայերէնի միջեւ։

Իսկ ո՞ր ժամանակներից մենք որոշ ու պարզ տեղեկութիւններ ունինք հայերի, որպէս այդ անուամբ ծանօթ եւ ուրոյն ազգի մասին։ Յայտնի է, որ Ասորեստանի թագաւորների թողած արձանագրութեանց մէջ բնաւ խօսք չէ արւում հայերի (կամ արմէնների) մասին։ Նոյնը նաեւ բաբելոնեան եւ խալդական արձանագրութիւնները։

«Հայոց գաղթի եւակէտը անկասկած յետագայի Փոքր Հայքն է եղել, այսինքն՝ այն երկիրը, որ ընկնում է Գայլ գետից (Լիւկոս, Քելբիտ) դէպի հարաւ ու Եփրատից արեւմուտք՝ մինչեւ այն շրջանը, ուր Բ. Յ. 9-րդ դարում Պոդիկեաններն էին կեդրոնացած, ասել է՝ մինչեւ այժմեան Դիվրիկ քաղաքը։ Քրիստոսից 7 դար առաջ հայերը արդէն իսկ ապրած պիտի լինին Կապադովկիային անմիջապէս կից մի երկրում։ Այդ երեւում է նրանից, որ հայերը դեռ յետքրիստոնէական շրջանում Կապադովկիան Գամերք են կոչում, այսինքն՝ իրանական-վաչկատուն Կիմմերների անունով, որոնք 7-րդ դարում այդ երկիրը տիրեցին։ Հայերի (արմէնների) գաղթը դէպի Փոքր Ասիա տեղի է ունեցել սակայն այդ՝ 7-րդ դարուց էլ հարիւրամեակներ առաջ։ Եթէ հայերն էլ, ասում է Մ., Թրէրների հետ միասին (Trer) 7-րդ դարում Բ. Ա. Թրակիայից Փոքր Ասիա եկած լինէին, այդ պարագային նրանց գաղթի մասին եւս տեղեկութիւն մնացած կը լինէր մեզ, ինչպէս որ այդ միջոցին ներգաղթած Թրակիացի ուրիշ ժողովուրդների մասին տեղեկութիւններ կան պահուած։

Հայ ցեղի եւ երկրի անուանակոչման համար բացի ազգային հայ, Հայք եւ վրացական Սոմեխի, Սոմխէրի անուններից՝ օտար լեզուների մէջ սկզբից մինչեւ օրս գործածական են արմէն, Արմենիա անունները։ Մինչեւ այժմ իշխող է եղել այն ընդհանուր կարծիքը, թէ առաջին անգամ այդ անունը գործածուած ենք գտնում պարսից Դարեհ Ա. թագաւորի արձանագրութեանց մէջ (520 թ.) — Արմենա, Արմինիա ձեւերով, որ եւ պարսիկներից յոյների միջոցով անցել է միւս ազգերին։

Մարքվարտ կարծում է սակայն, որ մեր ցեղի այդ անուանակոչումը աւելի հին աղբիւրների մէջ եւս պահուած կայ։ Այդպիսին է, նրա ասելով, Հոմերոսի Իլիականը, ուր պահուած է հայ անուան հնագոյն հետքը։ Դա այսպէս կոչուած Հոմերեան նաւացուցակն է (Իլիական Բ. 783), ուր խօսք է արուած արիմ, արիմներ ցեղի մասին, որի բնակութեան վայրն էլ համապատասխանում է փոքրասիական այն շրջանին, ուր սկզբնապէս հաստատուել էին հայերը, արեւմտ. սահման ունենալով Հալիւսի ակունքը։

Ահա այդ արիմներին էլ Մարքվարտ համարում է նախահայրեր հայերի (արմէնների)։

Մարքվարտ հին պարսկական Armina յունական Armenioi անունների արմատը համարում է arm կամ ar (i)m, ar (u)m, որից եւ խալդական ini վերջաւորութեան օգնութեամբ կազմուել են վերոյիշեալ Arm-ina Arm-eni-oi ձեւերը։

Յայտնի է արդէն, որ խալդական -- i (u)ni վերջաւորութիւնը հայերէնի մէջ եւս պահուել է, յատկապէս ցեղ անունների մէջ (Բագրատունի եւայլն)։ Ըստ այդմ՝ Մարքվարտ անհաւանական չէ համարում Կ. Լեհման Հաուպտի այն ենթադրութիւնը եւս, թէ խալդական Մենուաս թագաւորի մի արձանագրութեան մէջ